Արձանագրություն N 3

« ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի՝ հայտերի շտկման գնահատման նիստի

ք.Երևան «15» «10» 2025թ

ժամը 15-00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ռ. Առաքելյան
Հանձնաժողովի անդամ	Ա.Մանուկյան
Հանձնաժողովի անդամ	Ա. Նիկողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Վ.Մաշկովսկայա

1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(Ռ.Առաքելյան)

1.1 Ընդունել ի գոիտություն որ.

Համաձայն հանձնաժողովի 08.10.2025 արձանագրություն N 2-ի, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը չէին համապատասխանում հրավերի պահանջներին :

1.2 ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ին և ԱԷՅ ՍՊԸ-ին համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշման 41 և 42-րդ կետերի,տրվել է 1 աշխատանքային օր,անհամապատասխանությունները շտկելու համար :

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ահամապատասխանությունների շտկման մասին

(Ռ.Առաքելյան)

2.1 1-ին չափաբաժնի համար ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ի կողմից՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշման 41 և 42-րդ կետերի պահանջների համաձայն չեն կատարվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումները: Շտկման փուլում պահանջվող փաստաթղթերը՝ «.... Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման առնվազն մեկ կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) և արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար (ՄԱՖ կամ ԴԱՖ):

- ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ն ներկայացրել է տեղեկանք՝ /ԴԱՖ/ «Էլքոր դիսթրիբյուշն» ՍՊԸ-ի կողմից տրված:

- «Էլքոր դիսթրիբյուշն» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով պաշտոնական արտադրողից ներմուծում իրականացնող կազմակերպություն, տալիս է տեղեկանք «Օազիս ՍՊԸ»-ին առ այն, որ վերջինս ՀՀ դատախազությանը մատակարարելու է հրավերի պահանջներին համապատասխան ապրանք:

Տեղեկանքում նշված «Օազիս ՍՊԸ»-ի ՀՎՀՀ-ն /02247256/՝ պատկանում է ուրիշ կազմակերպության այն է «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ-ն:

Վերոնշյալ երկու կազմակերպությունները չեն հանդիսանում ՀՀ դատախազության կարիքների համար «ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներ և չունեն ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ի հետ ընթացակարգին համատեղ մասնակցելու նպատակով կնքված պայմանագիր: Բացի այդ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է նաև ներկայացվող ապրանքի՝ այն է Acer մոդելի համակարգիչների սպասարկման կենտրոնի հասցեի և անվանման անճշտություն, մասնակցի կողմից ներկայցված՝ իր իսկ կողմից հաստատված տեղեկանքում նշված է, որ Acer մոդելի համակարգիչների երաշխիքային սպասարկման պաշտոնական սպասարկման կենտրոնն է Յունիտեք ՍՊԸ-ն /հասցե Չարենցի 113/1/, սակայն Acer.com պաշտոնական կայքում նշված է, որ ՀՀ տարածքում վերը նշված մոդելով համակարգիչների պաշտոնական սպասարկման կենտրոնն է հանդիսանում ՖԱՅՆ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ն /հասցե Զաքիան 8/:

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

<u>2.2</u> **<u>1-ին չափաբաժնի համար</u>** <u>ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>

<u>2-րդ չափաբաժնի համար</u> <u>ԱԷՅ ՍՊԸ -ի</u> ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է բավարար:

2.3 - Ընտրված մասնակից ճանաչել 2-րդ չափաբաժնով ԱԷՅ ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:
- ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է անբավարար և մերժվում է:
- Սահմանված ժամկետում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա ենթակետի պահանջով՝ այն է՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում համաձայն 526-Ն որոշման 32-րդ կետի 29-րդ ենթակետի :

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Առաքելյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Մանուկյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Նիկողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Մաշկովսկայա